

ԼՂՀ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՉԵՎԱԿԱՐՈՒՄԸ ԵՎ ԶՍԲԳԱՅՈՒՄԸ ԸՈՒԿԱՅԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Հ. Վ. Հովհաննիսյան

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բյուջետային համակարգը բաղկացած է պետական և համայնքային բյուջեներից: Այդ համակարգը հիմնվում է ֆինանսական, դրամավարկային և հարկային միասնական պետական քաղաքականության վրա, որը տարածվում է Արցախի բոլոր շրջաններում: Շուկայական տնտեսության արդի պայմաններում գործող ԼՂՀ բյուջետային համակարգը օրենսդրորեն հիմնվում է հանրապետության Ազգային ժողովի 1999թ. հունվարի 18-ին քննարկած «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի վրա, որում մինչ այժմ կատարվել են մի քանի փոփոխություններ*:

Մինչև ԽՍՀՄ-ի փլուզումը նախկին միութենական հանրապետությունների բյուջետային համակարգը գործել է՝ հիմնվելով 1961 թվականին ընդունված համանուն օրենքի վրա: Սակայն տարիներ շարունակ խախտվել է բյուջեի մասին օրենքը, բյուջետային գործընթացն ունեցել է թերություններ, օրինակ՝ չի պահպանվել բյուջետային տարվա օրացույցային ժամանակահատվածը (հունվարի 1-դեկտեմբերի 31), որի ընթացքում գործել է հաստատված բյուջեն, չի եղել վերահսկողություն պետական բյուջեի կազմման, կատարման գործընթացներում և այլն:

Ֆինանսական քաղաքականությունը պետական միջոցառումների ամբողջությունն է՝ ուղղված երկրի ֆինանսական ռեսուրսների համակենտրոնացմանը, նրանց բաշխմանն ու օգտագործմանը, որը անհրաժեշտ է պետությանը իր ֆունկցիաների իրականացման համար**: Այն իրագործվում է կենտրոնացված և ապակենտրոնացված դրամական միջոցների ֆոնդերի կուտակման և երկրի ֆինանսական օրենսդրության հիման վրա դրանց օգտագործման ուղիով: Ֆինանսական քաղաքականության հիմնական խնդիրն է երկրում ֆինանսական ռեսուրսներով ապահովել այս կամ այն տնտեսական և սոցիալական զարգացման պետական ծրագրերը: Պատմական տարբեր ժամանակահատվածներում ֆինանսական քաղաքականությունը կարող է ուղղված լինել ֆինանսական ռեսուրսների համակենտրոնացմանը, որը անհրաժեշտ է պատերազմի վարման, պետական ապարատի հսկայական ծախսերի ծածկման, պետական պարտքի գծով վճարումների մարման համար: Այլ պատմական պայմաններում պետությունը սեփական ֆինանսական ծախսերը կրթության, առողջապահության, սոցիալական ապահովության ոլորտներում, որը ուղղված է ժողովրդի կենսամակարդակի բարձրացմանը, աշխատանքի և ապանաման միջոցառումների վե-

*1999թ. մարտի 15, դեկտեմբերի 31, 2000թ. ապրիլի 15-ի «ԼՂՀ բյուջետային համակարգի մասին» ԼՂՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին՝ ընդունված օրենքներ

**А. Ф. Шмукун „Экономическое теория“, М. 1996, стр. 548

րահակման ուժեղացմանը և այլն:

1991թ. սեպտեմբերի 2-ին Արցախը ձեռք բերեց անկախություն, և ինքնիշխան հանրապետության տնտեսության առջև կանգնած քարեփոխումների սկզբում կարևորվեց հատկապես ֆինանսական կայունացման քաղաքականությունը: Այն իրականացվեց՝ այդ ժամանակաշրջանում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ստեղծելով ֆինանսական գործունեություն իրականացնող պետական մարմիններ, որոնք միաժամանակ համընդհանուր են պետականության ատրիբուտներ:

Ֆինանսական գործունեություն իրականացնող պետական մարմինները բաժանվում են երկու խմբի*։ Առաջին խմբի մեջ են մտնում այն մարմինները, որոնք իրենց մյուս ֆունկցիաներին զուգահեռ իրականացնում են նաև ֆինանսական գործունեություն՝ հանրապետության նախագահ, Ազգային ժողով, կառավարություն, նախարարություններ: Երկրորդ խմբի մեջ են մտնում այն պետական մարմինները, որոնց համար ֆինանսական գործունեությունը հանդիսանում է հիմնական: Այդ մարմինները ստեղծվում են հատկապես ֆինանսական գործունեություն իրականացնելու համար և կազմում են պետության ֆինանսավարկային համակարգը՝ ֆինանսների նախարարություն, կենտրոնական բանկ:

Լեռնային Ղարաբաղի նորանկախ հանրապետությունում 1992թ. սկզբին ձևավորված էին պետության իշխանության քեներ՝ օրենսդիր՝ Գերագույն խորհուրդ և գործադիր՝ կառավարություն, մարմինները: Արդեն ստեղծված էին ֆինանսական գործունեություն իրականացնող պետական մարմինները՝ Ֆինանսների նախարարություն, ԼՂՀ Կենտրոնական բանկ, որոնք էլ երկրի ներսում ձևավորվում և զարգացնում են ֆինանսական քաղաքականությունը: Սակայն 1992-1994թթ. ընկած ժամանակահատվածում պատերազմական գործողությունների պատճառով Արցախում ստեղծված արտակարգ իրավիճակի բոլորեց հանրապետությունում ստեղծել կառավարման նոր համակարգ՝ Պաշտպանության պետական կոմիտե, որն իր ձեռքում կենտրոնացրեց ԼՂՀ գործադիր իշխանության լիազորություններն ամբողջությամբ և օրենսդիր մարմնի լիազորությունների մի մասը: Փաստորեն, մինչև 1994թ. հանրապետության ֆինանսական համակարգը, դրա մեջ մտնող բյուջետային քաղաքականությունը իրականացվեց ՊՊԿ-ի կողմից,** որի գործունեությունը, մեր կարծիքով, ամբողջությամբ ուղղվեց պատերազմի վարմանը: Դա օբյեկտիվորեն դանդաղեցրեց ԼՂՀ ֆինանսական դաշտի, այդ հիմքի վրա իրականացվող միասնական պետական ֆինանսական քաղաքականության ձևավորման ու զարգացման գործընթացները:

Հետպատերազմյան ժամանակաշրջանի Արցախի պետության և նրա համապատասխան օղակների մշակած միասնական պետական ֆինանսական քաղաքականությունը դրսևորվեց երկու՝ դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունների միաժամանակյա իրականացմամբ, որոնք գործնականում պետություններում լինում են սերտորեն փոխկապակցված: Առավել էս, դրամավարկային քա-

*Մ. Մուրադյան, Գ. Մուրիաթյան «ՀՀ ֆինանսական իրավունք», Երևան, 1996թ., էջ 9

**Պատերազմի ժամանակ ՊՊԿ-ի տրամադրության տակ եղած ԼՂՀ բյուջետային համակարգի, դրա հետ կապված բյուջետային քաղաքականության վերաբերյալ չկան համապատասխան տվյալներ

դաքականությունը հակաբյուրեղացիական անջատ իրականացնելը կարող է անուղղելի հետևանքների հասցնել: 'Դա առանձնապես վտանգավոր է շուկայական տնտեսությանն անցնելիս, երբ ազգային տնտեսության մեջ տնտեսական անկումն ուղեկցվում է գերինֆլյացիայով, գործազրկության աճով, պրտաքին տնտեսական կապերի և ներքին շուկայի անհավասարակշռվածությամբ, պետական բյուջեի մեծ դեֆիցիտով:

'Դրամաշրջանառության և վարկի բնագավառներում պետական միջոցառումների ամբողջությունը կոչվում է դրամավարկային քաղաքականություն*: Այդ քաղաքականության հիմնական նպատակը վարկի և դրամաշրջանառության գործընթացների վրա կերպարվածության միջոցով տնտեսական իրավիճակների կարգավորումն է: Պետության կողմից դրամավարկային քաղաքականությունն իրականացվում է կենտրոնական բանկի միջոցով, մասնավոր ինստիտուտների վրա ներգործելով, որովհետև դրանք են դրամավարկային համակարգի հիմքը: Այդ կարգավորումը կատարվում է մի շարք ուղղություններով: Դրանցից են.

1. մասնավոր ֆինանսավարկային ինստիտուտների իրացվելիության ամրապնդումը, այսինքն՝ ռապիդ շրջան կարողանալն ժամանակին բավարարել ներդրողների պահանջները,
2. պետական պարտքի կառավարումը, որը հիմնական ուղղություններից մեկն է, հատկապես, երբ պետական բյուջեն վարկերի և դեֆիցիտ ունի: Ներքին պետական պարտքի կտրուկ մեծացման դեպքում աճում է պետական վարկի ազդեցությունը փոխառական կապիտալի շուկայի վրա: Դրա համար պետական պարտքի կառավարման տարբեր մեթոդներ են կիրառվում կենտրոնական բանկի կողմից. գնում կամ վաճառվում են պետական պարտավորությունները, փոխվում են պարտատոմսերի գները, դրանց իրացման պայմանները և այլն,
3. դրամական նիսիայի և վարկային գործարքների ծավալների կարգավորումը, որը, ամենից առաջ, ուղղված է արժեզրկման դեմ, ևս ուղղություն է, որը սերտորեն կապված է նախորդների հետ: Բանկային իրացվելիության կարգավորումը ազդում է բանկային վարկերի կառուցվածքի դրամի զանգվածի տոկոսի շուկայական նորմայի վրա: Պետական պարտքի կարգավորումը ազդում է մասնավոր և պետական ոլորտների նիսի փոխառական կապիտալի բաշխման տոկոսադրույքների վրա և այլն:

Այսպիսով, պետությունը իր դրամավարկային քաղաքականությունը գործնականում իրականացնում է կենտրոնական բանկի միջոցով: Վերջինս պետության կողմից լիազորված է օրենքով նախատեսված իրավունքներով:

Մինչև 1996 թվականը Արցախի դրամավարկային միասնական պետական քաղաքականությունն իրականացվել է ԼՂՀ կենտրոնական բանկի կողմից: Սակայն նրա գիրքը ինչ-որ առումով կրել է պայմանական, ավելի շուտ քաղաքական և ոչ թե տնտեսական բնույթ, քանի որ ԼՂՀ և ՀՀ գտնվում են միևնույն միասնական և արժույթային (դրամական) համակարգում, որի նկատմամբ վերահսկողություն ամբողջությամբ

* Գ. Կիրակոսյան, Ի. Խլղաթյան «Տնտեսագիտության տեսություն», Երևան, 2000, էջ 402 և ուրիշներ

յամբ իրականացնում է ՀՀ Կենտրոնական բանկը: Բայց միաժամանակ կարելի է նշել, որ ԼՂՀ Կենտրոնական բանկի դերը մեծ է Արցախի բյուջետային համակարգի ձևավորման ու զարգացման գործում, քանի որ բանկի յուրաքանչյուր բյուջետային տարվա ծախսերի նկատմամբ եկամուտների գերազանցումից մուտքերը ամրագրվել են ԼՂՀ պետական բյուջեի եկամուտների կազմում: Օրինակ՝ 1995թ. ԼՂՀ պետական բյուջեի եկամուտների մեջ այս մուտքերը կազմել են 100. 0 մլն. դրամ* կամ ամբողջ եկամուտների 10 տոկոսը: Բացի այդ, Արցախի պետական բյուջեի դրամավարկային կառավարումը այդ ժամանակահատվածում իրականացրել է ԼՂՀ Կենտրոնական բանկը որի այս ֆունկցիան, սկսած 1996թ. փետրվար ամսից, երբ Կենտրոնական բանկի և ինքնաբանկի հիմքի վրա ստեղծվեց ԼՂՀ ազգային բանկ «Արցախբանկը», փոխանցվեց վերջինիս:

Շուկայական տնտեսության ներկայիս պայմաններում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսական քաղաքականության մեջ մեծ նշանակություն ունի հարկային միասնական պետական քաղաքականության իրագործումը և դրա հետ կապված բյուջետային քաղաքականության զարգացման ապահովումը: Հարկային քաղաքականությունը վճռորոշ նշանակություն ունի բարձր տնտեսական և մակրոտնտեսական հավասարակշռության հարատևության ապահովման գործում: Բյուջետային համակարգում հարկերի դերը մեծ է, քանի որ դրանք կազմում են բյուջեի եկամուտների ձևավորման հիմնական ֆինանսական աղբյուրը: Տնտեսագիտական առումով հարկերը համարվում են ֆիսկալ քաղաքականության գործիք, և հարկային քաղաքականության բնագավառում պետության դերն այն է, որ կազմակերպվի հարկերի մուտքը պետական բյուջե, դրանով իսկ ապահովվի պետական բյուջեի եկամտային մասը, մյուս կողմից էլ հարկային քաղաքականության միջոցով խթանվի տնտեսության սյա կամ այն ճյուղի զարգացումը:

Յուրաքանչյուր պետություն ինքն է նշակում և կենսագործում հարկային քաղաքականությունը՝ ելնելով երկրի առջև ծառացած սոցիալ-տնտեսական և պաշտպանական խնդիրներից: Պետության կողմից կիրառվող հարկային քաղաքականությունը պետք է խթանի արտադրության զարգացումը, նպաստի դրա արդյունավետության բարձրացմանը, արտադրանքի որակի բարելավմանը, բնակչության սոցիալական դրության լավացմանը:

Ընդհանուր առմամբ մինչև 1997-1998թթ. ԼՂՀ հարկային համակարգին բնորոշ էին հստկման նեղ բազան և բարձր դրույթաչափերը, որոնք չէին կարող խթան հանդիսանալ տնտեսության զարգացման, ներդրումների իրականացման և պետական բյուջեի եկամուտների հավաքագրման համար: Դեռ ավելին, չափից ծանր հարկային բեռը հանրապետությունում հանգեցրել էր տնտեսական աճի դանդաղեցմանը և ստվեռային տնտեսության ծավալմանը, որը հեռանկարում կարող էր կազմալուծել ԼՂՀ - պետական կարկառյուջետային համակարգը: Այդ պատճառներով պայմանավորված, վերը նշված ժամանակներից Արցախում գրեթե բոլոր հարկատեսակների գծով նոր օրենսդրության գործողությունը ազդարարեց տնտեսության զարգացման ուղղված հարկային քաղաքականության նախասկիզբը, որով նպատակ էր դրվում ընդլայնել հարկման բազան, նվազեցնել հարկման դրույթաչափերը, տեղափոխել հարկման ծանրությունը ուղղակի հարկերից անուղղակի հարկերի վրա և այլ հարկային բարեփոխումների իրականացումը: Մասնավորապես՝ 1998թ. օգոստոսի 4-ին ընդունվեց «Ալցիգիզային հարկի մասին», օգոստոսի 5-ին՝ «Հարկերի մասին», նոյեմբերի 1-ին՝

* «ԼՂՀ 1995թ. պետական բյուջեի մասին» ԼՂՀ Դերագույն խորհրդի որոշում, փետրվարի 14, 1995թ. ք. Ստեփանակերտ

«Հաստատագրված վճարների մասին», 1999թ. հուլիսի 1-ից ընդունվեցին «Շահաբախարկի մասին», «Եկամտահարկի մասին», «Գույքահարկի մասին» և «Հողի հարկի մասին» ԼՂՀ հիմնական օրենքները: «Հարկերի մասին» ԼՂՀ նոր օրենքի ընդունումը Արցախում նոր հարկային համակարգի ձևավորման բեկումնային քայլը հանդիսացավ, որը սկզբունքորեն նոր հարթություն տեղափոխեց հարկային համակարգի հիմնարար սկզբունքները, մասնավորապես՝ հարկային մարմինների և հարկատուների հարաբերությունների կարգավորումը, հարկ վճարողի իրավունքներն ու պարտականությունները, հարկային օրենսդրությունը խախտելու համար պատասխանատվությունը, ինչպես նաև հարկային արտոնությունները:

ԼՂՀ Պետական ֆինանսների համակարգում կենտրոնական տեղը և դերը պատկանում է Արցախի բյուջետային համակարգին և մասնավորապես պետական բյուջեին: Շուկայական տնտեսության պայմաններում մեծ է պետական բյուջեի դերը, քանի որ բյուջեում կենտրոնացվող զրամական ռեսուրսների միջոցով ԼՂՀ կառավարությունը կարգավորում է հանրապետության տնտեսական կյանքը՝ ելնելով ժամանակի շուկայական հարաբերությունների պահանջներից: Այն երկրի տնտեսական, սոցիալական կյանքը արտացոլող ֆինանսական ծրագիրն է:

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքով Արցախի բյուջետային համակարգի զարգացումը շուկայական հարաբերությունների ներկայիս պայմաններում դրվեց նոր հիմքի վրա, որով օրենսդրորեն կանոնագրված է բյուջետային գործընթացը՝ և պետական, և համայնքների բյուջեների համար: Օրենքի հեղված 37-ում սահմանված է բյուջետային դասակարգման կազմը, որի համաձայն Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում բյուջեները կազմվում և կատարվում են՝ ըստ բյուջեների եկամուտների ու ծախսերի միասնական դասակարգման*: Բյուջետային դասակարգումը պետական և համայնքների բյուջեների եկամուտների ու ծախսերի խմբավորումն է ըստ տեսակների և ուղղությունների, որով ապահովվում է բյուջեների ցուցանիշների համադրելիությունը: Արցախի պետական բյուջեի եկամուտների և ծախսերի ամեն մի հոդված հայելու պես իր մեջ արտացոլում է հանրապետության տնտեսական զարգացման հզորությունը և հնարավորությունները, հասարակության տնտեսական ու սոցիալական և հոգևոր պահանջմունքների բավարարման աստիճանը: Ներկայացնենք և վերլուծենք վերջին տարիների ԼՂՀ պետական բյուջեի կառուցվածքը՝ ըստ Եկամուտների և ծախսերի:

1998-2001թթ. պետական բյուջեի եկամուտների դասակարգումը տրված է ստորև ներկայացված աղյուսակում:

*«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենք, 1999թ. ք. Ստեփանակերտ, էջ 20

աղյուսակ 1

Ցուցանիշներ	1998թ.		1999թ.		2000թ.		2001թ.	
	Գումարը (մլն. դրամ)	Տեսակա- րար կշիռ, %	Գումարը (մլն. դրամ)	Տեսակա- րար կշիռ %	Գումարը (մլն. դրամ)	Տեսակա- րար կշիռ %	Գումարը (մլն. դրամ)	Տեսակա- րար կշիռ %
Ընդամենը եկա- մուտներ և պաշտո- նական տրանս- ֆերտներ, այդ թվում՝	2513.7	100	1613.5	100	2210.6	100	2790.4	100
1.Ընդամենը եկամու- տներ, որից՝	2513.7	100	1613.5	100	2210.6	100	2790.4	100
Ա՝ բնթացիկ եկամու- տներ, այդ թվում՝	2417.9	96.2	1576.0	97.7	2150.3	97.3	2770.4	99.3
1 Հարկային եկամու- տներ, այդ թվում՝	2048.6	81.5	1197.9	74.2	1697.0	76.8	1929.4	69.1
ա)ավելացված արժեքի հարկ(ԱՎՀ)	1019.2	40.5	724.4	44.9	906.2	41.0	1050.0	37.6
բ)շահութահարկ	142.9	5.7	237.7	14.7	268.4	12.1	230.0	82
գ) եկամտահարկ	597.2	23.8	-	0	284.1	12.9	289.4	10.4
դ)ակցիզային հարկ	105.4	4.2	35.8	2.2	42.2	1.9	130.0	4.7
ե) գոյքահարկ	29.2	1.2	1.2	0.1	5.2	0.2	5.0	0.2
զ)հողի հարկ	75.0	3.0	5.9	0.4	9.4	0.4	7.0	0.2
է)մաքսատուրք	36.1	1.4	18.6	1.2	-	0	-	0
բ)հաստատագրված վճարներ	-	0	122.3	7.6	139.4	6.3	165.0	5.9
բ)բնօգտագործման և բնապահպանման վճարներ	7.5	0.3	14.6	0.9	42.0	1.9	53.0	1.9
ժ)ճանապարհային վճար	34.5	1.4	37.5	2.3	-	0	-	0
ի)անտառային եկա- մուտ	1.5	0.06	0	0	0	0	0	0
2.Պետական տուրք	59.9	2.4	107.6	6.7	137.9	6.3	165.0	5.9
3.Ոչ հարկային եկա- մուտներ	309.4	12.3	270.5	16.8	315.5	14.3	676.0	24.2
Բ. Կապիտալի գործառ- նություններից եկա- մուտներ	95.8	3.8	37.4	2.3	60.3	2.7	20.0	0.7
Դ՝ Պաշտոնական տրանսֆերտներ	-	0	-	0	-	0	-	0

* ԼՂՀ 1998-2000թթ. պետական բյուջեի ցուցանիշները (եկամուտներ և ծախսեր) տրված են փաստացի կատարված, իսկ 2001թ.՝ օրենքով նախատեսված ցուցանիշներով:

Ինչպես երևում է, ԼՂՀ պետական բյուջեի եկամտային մասի հիմնական հոդվածները հարկերն ու տուրքերն են, ոչ հարկային եկամուտները, կապիտալի գործառնությունից մուտքերը, պաշտոնական տրանսֆերտները:

«ԼՂՀ բյուջետային համակարգի մասին» օրենքով չնայած բյուջեի եկամտային մասում ամրագրվում է պաշտոնական տրանսֆերտները, սակայն, քանի որ Արցախը մինչև այժմ միջազգայնորեն ճանաչված չէ օտարերկրյա պետությունների կողմից որպես ինքնիշխան պետություն, ուստի օտարերկրյա պետությունները կամ միջազգային կազմակերպությունները առ այսօր ԼՂՀ պետական բյուջեին չեն տրամադրում տրանսֆերտներ:

ԼՂՀ պետական բյուջեի եկամուտները 1999թ.-ին նախորդ տարվա համեմատ կտրուկ նվազել են (35.8 տոկոսով), իսկ հետագա տարիներին աստիճանաբար աճել:

«ԼՂՀ բյուջետային համակարգի մասին» օրենքով սկսած 1999 թվականից Արցախում ձևավորվեցին համայնքների բյուջեներ, որը հանդիսացավ տվյալ բյուջետային տարվա նորույթը և տեղի ունեցավ եկամուտների բաշխում ԼՂՀ պետական և տեղական բյուջեների միջև:

Շուկայական տնտեսության պայմաններում, ինչպես մնացած երկրներում, այնպես էլ Արցախում պետական բյուջեի եկամուտների հիմնական աղբյուրը հանդիսանում են հարկերն ու տուրքերը: Վերը նշված օրենքով եկամտահարկը ամրագրվել է համայնքների բյուջեներին, որի պատճառով 1999թ. ընթացքում այս հարկատեսակի գծով մուտքեր չեն ապահովվել ԼՂՀ պետական բյուջե, սակայն 1999թ. դեկտեմբերի 31-ի փոփոխությամբ Եկամտահարկի գծով սահմանվեց, որ եկամտահարկի 85 տոկոսը պետք է մուտքագրվի պետական բյուջե, իսկ 15 տոկոսը՝ համայնքների բյուջեներ: Ընդհանուր առմամբ մեղմ քաղաքականություն է վարվել ուղղակի հարկերի (շահութահարկ և եկամտահարկ) ուղղությամբ, որը բերել է հարկային եկամուտների մեջ դրանց տեսակաբար կշռի նվազմանը՝ համապատասխանաբար կազմելով 2000 թվականին՝ 15.8 և 16.7, 2001 թվականին՝ 11.9 և 15 տոկոս: Դրանց ծանրությունը տեղափոխվել է անուղղակի հարկերի (ԱԱՀ և ակցիզահարկ) վրա, որոնց ուղղությամբ իրականացվել է հարկային արտոնությունների նվազեցման, հարկային վարչարարության և հարկման մեխանիզմների կատարելագործման քաղաքականություն և հանգեցրել դրանց գծով բացարձակ մուտքերի ավելացմանը: Հողի հարկի և գույքահարկի գծով մուտքերը 1999 թվականից նախորդ տարվա համեմատ կտրուկ նվազել են, որը պայմանավորված է օրենքով դրանց փոքր մասի ամրագրմանը (5 տոկոս) ԼՂՀ պետական բյուջեի հարկային եկամուտների մեջ: Մաքսատուրքի գծով եկամուտներ 2000 թվականից սկսած չեն մուտքագրվել պետական բյուջե, որը վկայում է, որ այս հարկատեսակը դադարել է գործնականում հանդես գալ որպես հարկային եկամուտ, չնայած մաքսային գործը իրավական առումով մինչև այժմ շարունակում է ԼՂՀ-ում գոյություն ունենալ: Շահապարհային վճարները «ԼՂՀ բյուջետային համակարգի մասին» օրենքով ամրագրվել են պետական բյուջեի ոչ հարկային եկամուտների կազմում, իսկ անտառային եկամուտները, 1998թ. կազմելով 1.5 մլն. դրամ, հետագայում ներառել են բնօգտագործման և բնապահպանական վճարումների մեջ: Պետական տուրքից ստացվող եկամուտները տարեցտարի բացարձակ ցուցանիշներով աճել են:

Ոչ հարկային եկամուտներից մուտքերը բացարձակ գումարով նույնպես աճել են, իսկ կապիտալի գործառնություններից մուտքերը՝ 1999թ. նախորդ տարվա համեմատ նվազել են, 2000 թվականին բացարձակ մեծությամբ և տեսակաբար կշռով աճել են, իսկ 2001 թվականին նախատեսված ցուցանիշով նվազել են և կազմել պետական բյուջեի եկամուտների 0.7 տոկոսը:

Պետական բյուջեի ծախսերը ցույց են տալիս բյուջետային վճարումների նպատակները և ուղղությունները ըստ դասակարգման տարբեր տեսակների (գործառնական, տնտեսական, տարածքային և այլն): Խոշորացված խմբերով բյուջեի ծախսային հոդվածները բաժանվում են՝ պետական կառավարման ծախսերի, ռազմական ծախսերի, սոցիալական ծախսերի, պետության տնտեսական գործունեության ծախսերի, արտաքին պարտքի սպասարկման ծախսերի և այլն: 1998-2001թթ. Արցախի պետական բյուջեի ծախսերի վերլուծությունը կատարենք՝ ներկայացնելով ըստ ֆունկցիոնալ (գործառնական) դասակարգման կտրվածքով:

Պետական բյուջեի ծախսերի ֆունկցիոնալ (գործառնական) դասակարգումը պետական մարմինների հիմնական գործառնությունների իրականացման ֆինանսավորման ուղղություններն արտահայտող բյուջետային ծախսերի խմբավորումն է*:

1.42 1998-2001թթ. պետական բյուջեի ծախսերը (ըստ գործառնական դասակարգման) և դեֆիցիտը*

աղյուսակ 2.

Ցուցանիշներ	1998թ.		1999թ.		2000թ.		2001թ.	
	Գումարը (մլն դրամ)	Տեսա- կարար կշիռ %	Գումարը (մլն դրամ)	Տեսա- կարար կշիռ%	Գումարը (մլն դրամ)	Տեսա- կարար կշիռ%	Գումարը (մլն դրամ)	Տեսա- կարար կշիռ%
Ընդամենը ծախսեր, այդ թվում՝	9247.0	100	11496.1	100	11610.8	100	12353.9	100
01 Ընդհանուր բնույթի պետական ծախսություններ	641.7	6.9	738.2	6.4	866.3	7.5	987.4	8
02 Պաշտպանություն	11.2	0.1	13.7	0.1	15.5	0.1	16.1	0.1
03 Հասարակական կարգի պահպանություն և անվտանգություն	631.2	6.8	694.4	6.0	838.9	7.2	958.2	7.8
04 Կրթություն և գիտություն	1064.0	11.5	298.1	2.6	1802.7	15.5	1767.7	14.3
05 Առողջապահություն	812.6	8.8	448.9	3.9	664.9	5.7	787.7	6.4
06 Սոցիալական ապահովություն և սոցիալական անվտանգություն	1701.9	18.4	1715.3	14.9	3454.0	29.8	4164.6	33.7
07 Օրակույթ, երիտասարդության հարցեր և սպորտ	295.6	3.2	299.7	2.6	432.6	3.7	451.1	3.6
08 Բնակարանային կոմունալ տնտեսություն	212.9	2.3	-	0	17.0	0.1	40.0	0.3
09 Էլեկտրատնտեսություն, անտառային տնտեսություն	128.0	1.4	1128.1	9.8	146.3	1.3	131.5	1.1
10 Արդյունաբերություն, շինարարություն և բնապահպանություն	25.7	0.3	540.0	4.7	42.9	0.4	44.9	0.4
11 Տրանսպորտ և կապ, ճանապարհային տնտեսություն	91.2	1.0	-	0	-	0	-	0
12 Էլյ տնտեսական ծախսություններ	-	0	-	0	-	0	-	0
13 Հիմնական խմբին չդասվող ծախսեր	3630.9	39.3	5610.9	48.8	3329.7	28.7	3004.8	24.3
Պետական բյուջեի դեֆիցիտ	6733.3	72.8	9882.6	86.0	9400.2	81	9563.5	77.4

*«Լեռնային Ղարաբաղի հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենք, 1999թ., ք. Ստեփանակերտ, հոդված 39, էջ. 22

ԼՂՀ պետական բյուջեի ծախսերը, ըստ«Բյուջետային համակարգի մասին», օրենքի. բաժանվում է 13 խումբ ծախսերի և տարբերվում է ՀՀ բյուջեների ծախսերի գործառնական դասակարգումից նրանով, որ եթե Հայաստանում պետական բյուջեի ծախսերը 14 խումբ են կազմում, ապա Արցախում օրենքով ծախսերի մեջ առանձին հոդվածով չեն ներառվում վառելիքային և էներգետիկ համալիրի վրա կարվող ծախսերը: Այլ տնտեսական ծառայությունների գծով ծախսերը, չնայած օրենքով առանձին հոդվածով ամրագրված է, սակայն 1998-2001թթ. ժամանակահատվածում Արցախի պետական բյուջեից այդ ուղղությամբ ծախսեր չեն իրականացվել, իսկ տրանսպորտի և կապի, ճանապարհային տնտեսության ուղղությամբ կատարված ծախսերը 1998 թվականից կազմել են 91.2 մլն. դրամ (կամ ամբողջ ծախսերի 1.0%), իսկ 1999 թվականից այդ ուղղությամբ ծախսեր չեն կատարվել:

ԼՂՀ պետական բյուջեի ընդհանուր ծախսերը 1998-2001թթ. ժամանակահատվածում մեծացել են: 2000 թվականից ԼՂՀ բյուջետային քաղաքականությունը նոր հիմքերի վրա դրվեց, և կարևորվեց՝ բյուջետային ռազմավարությունը մշակելիս յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի հստակ առաջնությունը սահմանումը, պետական բյուջեի բյուջետային գործընթացների կատարելագործումն ու հստակ իրականացումը, պետական ծախսերն իրականացնելիս լիակատար շուկայական մեխանիզմների ներդրումը և այլն: Օրինակ՝ 2000թ. պետական բյուջեն կազմելիս այն համարվեց «սոցիալական կայունացման» բյուջե և իր բնույթով բազային: Ուստի այդ տարվա մեջ մեծ ուշադրություն դարձվեց և ծախսերը հիմնականում ուղղվեցին սոցիալական ապահովության և ապահովագրության, առողջապահության, կրթության և գիտության, մշակույթի սպորտի բնագավառներ: Փաստորեն, հանրապետության համար կարևորվեց սոցիալական ու կրթական մակարդակի բարձրացումը և դրա հիմքի վրա հետագայում տնտեսության զարգացման ապահովումը: 2001թ. սոցիալական ապահովության և ապահովագրության առողջապահության ծախսերն իրենց տեսակարար կշռով էլ ավելի են մեծացել, իսկ կրթության և գիտությանը հատկացվող ծախսերը ընդհակառակը՝ նվազել են:

Այսպիսով, ուսումնասիրելով ԼՂՀ պետական բյուջեի 1998-2001թթ. եկամուտների և ծախսերի կառուցվածքը, կարող ենք նշել դեռևս դրանցում առկա հետևյալ ֆի-նանսական հիմնախնդիրները.

1. հանրապետության հարկային համակարգի ուղղահայաց և հորիզոնական արդարության ապահովման, պարզության և հստակության, հարկային վարչարարության ցածր մակարդակը, որոնց լուծմանն են ուղված ներկայումս վարվող հարկային բարեփոխումները,

2. պետական բյուջեի եկամուտների կառուցվածքում կապիտալի գործառնություններից ստացվող եկամուտների ցածր մակարդակը, որը հետևանք է Արցախում սեփականաշնորհման գործընթացի դանդաղ և ցածր մակարդակով իրականացման,

3. պետական բյուջեի ծախսերի ոչ լրիվ նպատակայնության ապահովումը, դրանց, ըստ տնտեսության ճյուղերի, անհամամասնական բաշխումը և վերահսկողության ցածր մակարդակը:

Վերը նշվածի հետ միասին, շուկայական հարաբերությունների զարգացման արդի փուլում ԼՂՀ բյուջետային համակարգի կարևոր հիմնախնդիր է հանդիսանում բյուջեի դեֆիցիտը, որը այսօր բնորոշ է գրեթե բոլոր զարգացած երկրներին: 1993թ.

պետական բյուջեն ունեցել է 1.9 մլն. դրամ հավելուրդ և սկսած 1994 թվականից ԼՂՀ պետական բյուջեն յուրաքանչյուր տարի դեֆիցիտ է ունեցել և մինչև այսօր դեֆիցիտի ծավալները բացարձակ ցուցանիշներով շարունակում են աճել: Պետական բյուջեի դեֆիցիտը Արցախում օբյեկտիվորեն առաջադրված է տնտեսության կառուցվածքային տեղաշարժերի, ներդրումների իրականացման պահանջով, որը պայմանավորում է հանրապետությունում մեղմ հարկային քաղաքականության, պետական ծախսերի մեծացման իրագործումը և ի վերջո տնտեսության կայունացման ապահովումը: Եվ դրա հետ կապված, դեֆիցիտը ոչ թե արեեստականորեն պետք է կրճատել, այլ դա պետք է տեղի ունենա աստիճանաբար, առաջին հերթին ՀՆԱ նկատմամբ, և որը պետք է գույքորվի արդյունավետ հարկաբյուջետային քաղաքականության իրագործմամբ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենք, 1999
2. «ԼՂՀ 2001թ. պետական բյուջեի մասին» օրենք, 2001թ.
3. А. Ф. Шашкин „Экономическое теория“ М., 1996 г, стр. 547-549
4. Գ. Կիրակոսյան, Ի. Խլղաբյան և ուրիշներ «Տնտեսագիտության տեսություն», Ե., 2000թ., էջ 402-409
5. Ս. Մուրադյան, Գ. Սուրիասյան «ՀՀ ֆինանսական իրավունք», Երևան, 1996թ., էջ 9

Составление бюджетной системы и развитие в системе рыночной экономики в НКР

А.В.Ованисян

РЕЗЮМЕ

В статье представлена бюджетная система и процесс развития в рыночной экономики в НКР. Бюджетная система Арцаха, будучи составленная из государственного и местного бюджетов, основывается на совместной государственно-финансовой, денежно-кредитной и налоговой политики, а юридическим аспектом регулируется основным законом “Об бюджетной системы НКР”, который был принят от 18 января 1999г. Изучена структура, разновидность прибыли и расходы (функциональной группы) госбюджета и существующих в них основные задачи на период 1998-2001 гг. Развитие Арцахской бюджетной системы зависит от решения этих задач.

Creation and development budget system of Karabakh in market economic conditions

Summary

In the article is presented the process creation and development budget system of Karabakh in market economic conditions. Consist of state and local budgets the budget system of Artsakh is established on join state financial, monetary-credit and taxes policy. In keeping with the law it established on general law “About budget system of Karabakh” (it has been adopted on January 18 in 1999). It is analyzed in 1998-2001 yy. structure, difference incomes and expenditures (functional classify) of Karabakh state budget and the problems, which they have. In satisfying those problems it will be possible to ensure the normal development of Artsakh budget system.